

ՂԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՒԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայարփի Ջարգարյան

*Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին
աստիճանի դատարանի դատավոր,
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ*

Երեխան ազատ տեղաշարժվելու իրավունքի ինքնուրույն կրող է և կարող է, իր հասունության և զարգացման մակարդակին համապատասխան, իրացնել նշված իրավունքը, որն առանձին դեպքերում պետության կողմից կարող է ենթարկվել օրենքով սահմանված սահմանափակումների: Սակայն, անգամ այդ սահմանափակումները երեխայի հանդեպ կիրառելիս պետք է ղեկավարվել նրա լավագույն շահով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) բազմիցս անդրադարձել է «երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ դիտարկելով այն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի¹ (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) մի շարք հոդվածների համատեքստում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում բազմիցս անդրադարձել է «երեխայի լավագույն շահ» հասկացությանը և դրա գնահատմանը: Կարևոր է նշել, որ ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ՄԻԵԴ-ի կողմից երեխայի լավագույն շահը որպես կանոն վերլուծվում է որպես նյութական իրավունք:

Այսպես, «երեխայի լավագույն շահ» հասկացությունը նյութական իրավունքի տեսակյունից ՄԻԵԴ-ը հաճախ գնահատում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում՝ դիտարկելով այն ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի հետ անխզելի հարաբերակցության մեջ:

ՄԻԵԴ-ն իր որոշումներից մեկով արձանագրել է, որ երեխայի լավագույն շահն այն նյութական իրավունքն է, որը երաշխավորում է ոչ միայն երեխայի, այլև ծնողների անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Գերակայություն տալով երեխայի լավագույն շահին՝ որպես նյութական իրավունքի, արտահայտվել է այն դիրքորոշումը, որ ազգային դատարանները երբեմն հաշվի չեն առնում երեխայի լավագույն շահը՝ նրան վերաբերող ցանկացած տեղեկություն դիմումատուին (տվյալ դեպքում՝ փաստացի երեխայի խնամքը հոգացող անձին) տրամադրելու պահանջը մերժելիս²:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 04.11.1950 թվականին, Հայաստանի Հանրապետության *համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ից*:

² Տե՛ս՝ Schneider vs Germany գործը, գանգատ թիվ 17080/07, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 15.11.2011 թվական:

Դիտարկելով երեխայի լավագույն շահը որպես նյութական իրավունք՝ հատկապես կարևորվում է երեխայի լավագույն շահի վերահանումը, դրա գնահատումը կոնկրետ գործի առանձնահատկությունների լույսի ներքո՝ *ծնողական իրավունքներից զրկելու մասին*¹, *երեխայի՝ ընտանիքում ապրելու և ընտանեկան ջերմ մթնոլորտում ապրելու, զարգանալու իրավունքը* գնահատելիս²:

Երեխայի լավագույն շահը պետք է գնահատման առարկա դարձնել երեխային վերաբերող յուրաքանչյուր, հատկապես՝ երեխայի բնակության վայրը որոշելու հարցում: Ուստիև երեխայի բարեկեցիկ կյանքը, ինչպես նաև անվտանգ կենսապայմաններում բարոյահոգեբանական բնականոն զարգացումը երեխայի լավագույն շահերից են բխում: Դիտարկելով երեխայի լավագույն շահի դրսևորումը *երեխայի բնակության իրավունքի* իրացման համատեքստում՝ ՄԻԵԴ-ն անդրադարձել է փախստականի կարգավիճակ ունեցող ծնողների բնակության վայրի հատկացման կարևորությանը՝ երեխայի լավագույն շահերի տեսանկյունից՝ արձանագրելով ներպետական դատարանի կողմից խախտում այն հարցում, որ կառավարությունն անտեսել է երեխայի լավագույն շահը՝ մերժելով փախստականի կարգավիճակ ունեցող երեք երեխաների մորը բնակության վայր տրամադրելու հարցում³:

Մեկ այլ՝ Պոպովն ընդդեմ Ֆրանսիայի գործով, որը վերաբերում է իշխանությունների կողմից ապաստան հայցող ընտանիքների նկատմամբ վերաբերմունքին, ՄԻԵԴ-ը կրկին արձանագրել է ազգային դատարանի կողմից խախտում այն հարցում, որ երկու շաբաթ տևողությամբ երկու անչափահաս երեխաների ծնողների՝ դիմումատուների կալանքը (անազատության մեջ գտնվելը) բանտային պայմաններ ունեցող արտաքսման կենտրոնում խախտել է ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի սկզբունքը (Կոնվենցիայի 8-րդ հոդվածը) և հանգեցրել երեխաների լավագույն շահի ոտնահարմանը⁴: Նշված գործով ՄԻԵԴ-ը երեխայի լավագույն շահը դիտարկել է *նյութական իրավունքի* համատեքստում՝ միևնույն ժամանակ օգտագործելով *երեխայի լավագույն շահը՝ որպես նորմի մեկնաբանման սկզբունք* կոչ անելով ներպետական, ազգային դատարաններին նպաստել ընտանիքների համախմբմանը՝ ձեռնարկելով բոլոր հնարավոր միջոցները ծնողների տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման դեպքերում ծնողների նկատմամբ կիրառված համապատասխան (ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակման) ռեժիմի ողջ ընթացքում մանկահասակ երեխաների համար ստեղծելու առավելագույն պայմաններ՝ ծնողներից չբաժանելու և նրանց ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքն ապահովելու համար:

Անդրադառնալով *երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունքի* իրացմանը՝ Յոհանսենն ընդդեմ Նորվեգիայի գործով ՄԻԵԴ-ը քննարկել է իշխանությունների կողմից երեխային «վերցնելու» հարցը և հանգել այն եզրակացության, որ ներպետական իշխանությունները թույլ են տվել իրավասությունների սահմանազանցում՝ զրկելով դիմումատուին ծնողական իրավունքներից և իգական սեռի երեխայի նկատմամբ «հասանելիությունից» (նկատի ունի շփումը, անմի-

¹ Տե՛ս M.D. and others vs Malta գործը, գանգատ թիվ 64791/10, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 17.07.2012 թվական:

² Տե՛ս Pini and ors. v. Romania գործը, գանգատ թիվ 78028/01 and 78030/01, ՄԻԵԴ որոշում, 22.06.2004 թվական:

³ Տե՛ս Meriam Margriet JEUNESSE against the Netherlands գործը, գանգատ թիվ 12738/10, ՄԻԵԴ, Մեծ պալատ, 04.12.2012 թվական:

⁴ Տե՛ս POPOV v. FRANCE, գանգատ թիվ 39472/07 և 39474/07, ՄԻԵԴ, 19.01.2012 թվական:

ջականորեն երեխայի խնամքը և դաստիարակությունն իրականացնելը): ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ որդեգրման վերացումը և երեխային որդեգրողից բաժանումը ինքնին հանդիսանում են երեխային «ընտանեկան կյանքից» զրկում և որպես բացառիկ միջոց՝ պետք է կիրառվեն միայն այն դեպքում, երբ երեխային ծնողից բաժանելը բխում է երեխայի լավագույն շահերից: ՄԻԵԴ-ը ազգային դատարանի կողմից երեխայի լավագույն շահերի խախտում է գնահատել նրան որդեգրողից անհիմն բաժանելը¹:

Երեխայի ազատ տեղաշարժման իրավունքի համատեքստում երեխայի լավագույն շահի և ուշադրության արժանի այլ շահերի (բնականոն բարոյահոգեբանական զարգացման, բարեկեցության, առողջության պահպանման և այլն) միջև կարևոր է հավասարակշռության ապահովումը, որի համար պետք է հաշվի առնել երեխայի ուշադրության արժանի բոլոր շահերը՝ հուզական, հոգեբանական, նյութական և առողջապահական, երեխայի հետ շփվելու և կապ ապահովելու ծնողների ունակությունը²:

ՄԻԵԴ-ն իր նախադեպային մի շարք որոշումներում **երեխայի լավագույն շահը գնահատել է որպես և՛ նյութական իրավունք, և՛ սկզբունք, և՛ դատավարության կանոն**: Այսպես, ՄԻԵԴ-ը սահմանել է դատավարական կանոն, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դատավարությունն ուղղակի առնչվում է ՄԻԵԿ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին, պետք է լինի արդարացի և հնարավորություն ընձեռնի շահը կրողին իր փաստարկներն ամբողջությամբ ներկայացնելու դատարանում՝ շեշտադրում կատարելով դատարանում երեխայի լաված լինելու իրավունքի ապահովմանը:

Անդրադառնալով երեխայի լավագույն շահին **ծնողների հետ տեսակցության իրավունքի** իրականացման ընթացքում՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ ազգային դատարանները, փորձելով հավասարակշռություն ապահովել տարաբնույթ շահերի միջև, երբեմն անտեսում են երեխայի լավագույն շահը, որն առաջնահերթ է: Երեխայի լավագույն շահը չի կարող ըստ արժանվույն գնահատվել, եթե այն դիտարկվում է որպես **ընդհանրական իրավունք**, այլ պետք է ուշադրության առարկա դարձնել կոնկրետ գործի փաստական հանգամանքները³:

Երեխայի լավագույն շահի հասկացությունն ի սկզբանե երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում նախատեսվել է **որպես սկզբունք**: Սակայն դրա կենսագործման տարիների փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ երեխայի լավագույն շահը դադարել է միայն սկզբունք լինելուց և վաղուց արդեն դուրս է եկել «սկզբունքի» շրջանակներից: Չնայած այս հանգամանքին՝ «երեխայի լավագույն շահ» հասկացությունը մեկնաբանման տեղիք է տալիս, և այն բավականին ճկուն է:

«Երեխայի լավագույն շահի» սկզբունքը ծագել է շատ ավելի վաղ, քան ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան⁴, սակայն հենց նշված

¹ Sté u Johansen v. Norway, գանգատ թիվ 24/1995/530/616, ՄԻԵԴ, 27.06.1996 թվական:

² Sté u Туркович К., Гргич А., Наилучшие интересы ребенка в контексте статьи 8 Европейской конвенции о защите прав человека и основных свобод, <https://cyberleninka.ru/article/n/2017-02-017-turkovich-k-grgich-a-nailuchshie-interesy-rebenka-v-kontekste-stati-8-evropeyskoy-konventsii-o-zaschite-prav-cheloveka-i-osnovnyh-svobod>, 04.06.2021 թվականի դրությամբ:

³ Sté u Անայոն ընդդեմ Գերմանիայի, գանգատ թիվ 20578/07, ՄԻԵԴ, 21.12.2010 թվական:

⁴ Sté u «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, ընդունվել է 20.11.1989 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 22-ից:

փաստաթղթում ամրագրումն է նպաստել դրա՝ համաշխարհային իրավական համակարգում ամրապնդմանը¹:

Ֆրանսիայի վարչական դատարանի դատավոր Ֆաբրիս Լանգրոնեն, անդրադառնալով երեխայի արտաքսմանը և այդ հարցում լավագույն շահի դրսևորմանը, նշել է, որ երեխայի լավագույն շահի սկզբունքը հաշվի է առնվում ոչ միայն անմիջականորեն երեխային վերաբերող վիճելի հարցերը լուծելիս, այլև այն բոլոր հարցերում, որոնք ինչ-որ չափով ազդեցություն ունեն երեխայի վրա: Այսպիսիք են, օրինակ, երեխայի անուղղակի հեռացման հրամանները (անուղղակի հեռացման սկզբունք- the principle of indirect removal), երբ երեխան լքում է պետության տարածքը՝ պայմանավորված իրավասու մարմնի որոշմամբ: Նա նաև հավելել է, որ ֆրանսիական դատարանների կողմից ակտիվորեն կիրառվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը (**խոշտանգումների արգելք**) կապված երեխայի արտաքսման, ինչպես նաև այդ գործընթացին ուղեկցող այլ հարցերի կապակցությամբ կայացվող որոշումներում, օրինակ՝ պետության սահմաններից կամավոր դուրս գալու համար լրացուցիչ ժամկետ տրամադրելը մերժելը, ժամանման վայրի պետության կողմից կալանք կիրառելու կամ հարկադիր բնակության վայրի սահմանումը, Ֆրանսիայի Հանրապետության տարածք վերադառնալու արգելքը և այլն: Դատավորը նաև նշել է, որ ազգային դատարանների կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածն ավելի քիչ է կիրառվում, քան Կոնվենցիայի 8-րդ հոդվածը (**Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք**): Դատարանների կողմից առավել հաճախ կիրառվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածն այն գործերով, որոնք վերաբերում են Ֆրանսիայի Հանրապետության տարածքում բնակվող փախստականի կարգավիճակ ունեցող անձանց երեխաներին:

Ֆրանսիայի ազգային դատարանների կողմից առավել հաճախ **երեխայի լավագույն շահը** մեկնաբանվում է **ոչ միայն որպես սուբյեկտիվ նյութական, այլև որպես դատավարական իրավունք**: Ֆաբրիս Լանգրոնեն նաև նշել է, որ երեխայի լավագույն շահի ապահովումը դատարանների կողմից պետք է իրականացնել՝ հիմք ընդունելով երեք խումբ հարցեր՝ 1. երեխայի ընտանիքի պահպանում, 2. երեխայի տեղափոխման իրավական հետևանքների (կրթություն, լեզու, սոցիալական կապ) գնահատում, 3. դատարանների լիազորությունների էվոլյուցիոն զարգացում²:

Երեխաների ազատ տեղաշարժելու իրավունքը, ինչպես վերը նշվեց, մշտապես գտնվել է ՄԻԵԴ ուշադրության կենտրոնում, և չնայած այն հանգամանքին, որ իրավունքի այս տեսակը որպես ինքնուրույն իրավունք ամրագրում չի ստացել անդամ որևէ պետության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այդուհանդերձ այն վերարտադրվել է (կամ իմպլեմենտացվել է) իրավունքի այլ տեսակներում՝ հիմնականում քննարկման առարկա դառնալով երեխայի բնակության վայրի իրավունքի համատեքստում: Այսպես, օրինակ, երեխայի լավագույն շահերը քննության առարկա են դարձել երեխայի

¹ Stéu Լանգրոնե Փ., Наилучшие интересы ребенка во французских депортационных делах, The best interests of the child in French deportation case law // Human rights law review, Oxford, 2018-Vol. 18, N 3, <https://cyberleninka.ru/article/n/2020-04-023-langrone-f-nailuchshie-interesy-rebenka-vo-frantsuzskih-deportatsionnyh-delah-langrognet-f-the-best-interests-of-the>, 04.06.2021 թվականի դրությամբ:

² Stéu Լանգրոնե Փ., Наилучшие интересы ребенка во французских депортационных делах, The best interests of the child in French deportation case law // Human rights law review, Oxford, 2018-Vol. 18, N 3, <https://cyberleninka.ru/article/n/2020-04-023-langrone-f-nailuchshie-interesy-rebenka-vo-frantsuzskih-deportatsionnyh-delah-langrognet-f-the-best-interests-of-the>, 04.06.2021 թվականի դրությամբ, էջ 89:

և նրա ծնողների արտագաղթի ընթացքում, որին անդրադառնալով՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ արտագաղթի ժամանակ ծնողների և մեծահասակ երեխաների միջև առկա չէ ընտանեկան կյանք, բացառությամբ այն դեպքի, երբ նրանք, սովորական զգացմունքային կապվածությունից բացի, կարող են ներկայացնել կախվածության լրացուցիչ տարրեր¹: Սակայն այդպիսի կապերը կարող են հաշվի առնվել «անձնական կյանքի» շրջանակներում²: Իրենց սեփական ընտանիքը դեռ չհիմնած երիտասարդների վերաբերյալ մի շարք գործերով ՄԻԵԴ-ն ընդունել է, որ իրենց ծնողների և ընտանիքի մերձավոր այլ անդամների հետ երեխաների հարաբերությունները նույնպես համարվում են «ընտանեկան կյանք»³:

Երեխայի լավագույն շահը մեկնաբանելիս ՄԻԵԴ-ն ընդլայնել է նաև ՄԻԵԿ 8-րդ հոդվածով սահմանված՝ «ընտանեկան կապեր» հասկացությունը՝ նշելով, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ընտանեկան կյանք հասկացությունը չի ներառում միայն ամուսնության վրա հիմնված հարաբերությունները և կարող է ներառել փաստացի (de facto) «ընտանեկան» այլ կապերը, երբ արտասամուսնական կապերի մեջ գտնվող անձինք միասին են ապրում: Դատարանը հետագայում արտահայտել է նաև այն դիրքորոշումը, որ ենթադրյալ ընտանեկան կյանքը կարող է որպես բացառություն դիտարկվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում, մասնավորապես՝ այն փաստը, երբ ընտանիքն ամբողջությամբ չի կազմավորվել, դիմումատուի հետ առնչություն չունի⁴: Ավելին, այն դեպքում, երբ հանգամանքները «թույլատրում են», «ընտանեկան կյանքը» պետք է տարածվի նաև այն հնարավոր փոխհարաբերությունների վրա, որոնք կարող են զարգանալ արտասամուսնական կապերից ծնված երեխայի և կենսաբանական հոր միջև: Այս գործերում անձնական սերտ կապերի գոյության մասին վկայող վերաբերելի գործոնները ներառում են կենսաբանական ծնողների փոխհարաբերությունների բնույթը և՛ մինչ երեխայի ծնունդը, և՛ ծնունդից հետո հոր՝ երեխայի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունը և նվիրվածությունը⁵: Այնուամենայնիվ, համատեղ ապրելը երեխաների և ծնողների միջև ընտանեկան կյանքի մասին վկայող sine qua non պահանջ չէ⁶:

Կարևորում ենք նշել, որ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և դիրքորոշումները թեև մեծ դեր են կատարում անդամ բոլոր պետությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության իրավական մտքի և պրակտիկայի զարգացման հարցում, սակայն ՄԻԵԴ գործունեության կանոնակարգը տեսաբանների և պրակտիկ գործիչների կողմից ենթարկվել է բազմաթիվ քննադատությունների: Այդպիսիք ուղղված են հիմնականում ՄԻԵԴ թիվ 14 արձանագրությանը⁷, որի

¹ St' u Kwakye-Nti and Dufie ընդդեմ Նիդերլանդների գործը, գանգատ թիվ 31519/96, 7 07.11.2000, ինչպես նաև Slivenko ընդդեմ Լատվիայի գործը, գանգատ թիվ 48321/99, ECHR 2002-II, § 97:

² St' u Slivenko ընդդեմ Լատվիայի գործը, գանգատ թիվ 48321/99, ECHR 2002-II, § 97:

³ St' u Maslov ընդդեմ Ավստրիայի (ՄՊ), § 62:

⁴ St' u Pini and Others ընդդեմ Ռումինիայի գործը, գանգատ թիվ 78028/01 and 78030/01, ECHR 2004-V, §§ 143, 146:

⁵ St' u Nylund ընդդեմ Ֆինլանդիայի գործը, գանգատ թիվ 27110/95, ECHR 1999-VI, Nekvedavicius ընդդեմ Գերմանիայի գործը, գանգատ թիվ 46165/99, 19.06.2003, L. ընդդեմ Նիդերլանդների գործը, գանգատ թիվ 45582/99, ECHR 2004-IV, § 36, Anayo ընդդեմ Գերմանիայի գործը, գանգատ թիվ 20578/07, 21.12.2010, § 57:

⁶ St' u Berrehab ընդդեմ Նիդերլանդների գործը, գանգատ թիվ 138, 21.06.1988, § 21:

⁷ St' u «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի մասին վերահսկողության համակարգը փոփոխող և լրացնող թիվ 14 արձանագրություն», ընդունվել է 2004 թվականի մայիսի 13-ին Եվրոպայի խորհրդի կողմից, Հայաստանի Հանրապետությունում այն ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 01-ին:

նպատակն է ապահովել դատարանի երկարաժամկետ արդյունավետությունը՝ զանգատների ընտրությամբ և մշակման օպտիմալացմամբ: ՄԻԵԴ գործունեության վերաբերյալ *քննադատությունը հաճախ ուղղված է նաև դատարանի կողմից երեխայի լավագույն շահը որոշելու հստակ չափանիշների բացակայությանը:*

Օտարերկրյա դատարանների կողմից երեխայի լավագույն շահի կիրառման ապահովման, մեկնաբանության, ինչպես նաև լավագույն շահերի ոտնահարման դեպքերը ուսումնասիրելու հիմնական նպատակն է բացահայտել, թե ինչպես են դատարանները ընկալում և կիրառում երեխայի լավագույն շահի սկզբունքը երեխային վերաբերող վեճերը լուծելիս, ինչպես նաև պարզել, թե ինչ կերպ են խախտվում կամ անտեսվում երեխաների լավագույն շահերը դատարանների կողմից, վեր հանել դրա պատճառները և ապահովել պետության կողմից նման խախտումների բացահայտման, դրանք իրավական գնահատականի արժանացնելու, և հատկապես դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի «անտեսման» կանխարգելման համար սահմանել գործուն մեխանիզմներ թե՛ օրենսդրորեն, թե՛ գործնականում:

Այս առումով կարևորում ենք նշել, որ երեխայի լավագույն շահերը դատարանի կողմից ոչ միայն պետք է գերակա համարվեն երեխայի վերաբերյալ ցանկացած վեճ լուծելիս, այլև հանդիսանան այն չափորոշիչը, որով այդ կատեգորիայի գործերը հնարավոր կլինի տարանջել մյուս վեճերից՝ սահմանելով դրանց քննության առաջնահերթություն: Դրանով իսկ դատարանները կբացառեն երեխայի լավագույն շահերի «ոտնահարումը» գործի քննության ժամկետների հնարավորինս կրճատման եղանակով: Գտնում ենք նաև, որ երեխայի լավագույն շահերից է բխում իրեն վերաբերող ցանկացած վեճի լուծման համար ոչ միայն **հատուկ կրճատ** ժամկետների սահմանում օրենսդրի կողմից, այլև երեխայի լավագույն շահը պետք է դառնա այն սկզբունքը և չափորոշիչը, որը թույլ կտա նախապատվություն և առաջնահերթություն սահմանել երեխայի լավագույն շահերին վերաբերող բոլոր ընտանեկան գործերի քննության համար՝ ապահովելով **ոչ թե ողջամիտ, այլ սեղմ ժամկետում** դրանց քննությունը:

Սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը քաղաքացիական դատավարության կարգով ենթադրում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովում, ինչը երաշխավորվում է ներպետական իրավական համակարգում կանխորոշված ժամանակահատվածում վիճելի նյութական կամ այլ իրավահարաբերությունը կարգավորող դատական ակտի կայացմամբ՝ դրանով իսկ բացառելով անձի քաղաքացիաիրավական վիճակի անորոշությունը, ինչպես նաև գործնականում իրացնելով «իրավական որոշակիության» սկզբունքի հրամայականներն ու պահանջները¹:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը (**Արդար դատաքննության իրավունք**), «Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը (**Արդար դատաքննության իրավունք**), արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ առանձնացնելով *ողջամիտ* ժամկետներում գործի քննության իրավունքը, իրավական համակարգում այն ապահովելու ուղղակի պարտականություն են սահմանում պետության համար: Այս առումով հատկանշական է ՄԻԵԴ դիրքորոշումն առ այն, որ Կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է

¹ St' u *Нешатаева Т. Н.*, Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. М., 2007, էջ 83-101, Nuala Mole and Catharina Harby. The right to a fair trial. A guide to the implementation of the article 6 of European Convention on Human Rights // Human rights handbooks, № 3. Directorate General of Human Rights Council of Europe. 2006, էջ 25-27:

իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ դատարանները կարողանան ապահովել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ ներառյալ ժամկետների ողջամտությունը, և ներպետական դատարանների ժամանակավոր ծանրաբեռնվածությունը չի հանգեցնում պետության համար պատասխանատվության առաջացմանը, եթե պետությունը ձեռնարկում է նման իրավիճակը շտկելուն ուղղված անհապաղ արդյունավետ գործողություններ¹:

Հետևաբար, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտելու համար պատասխանատվությունն ամբողջապես կրում է պետությունը, որից վերջինս կարող է ազատվել միայն, եթե անհապաղ ձեռնարկել է հետագա խախտումները բացառելուն ուղղված արդյունավետ միջոցներ:

Քաղաքացիական դատավարությունում ողջամիտ ժամկետում գործերի քննության իրավունքի ապահովման հիմնահարցերը ՄԻԵԴ նախադեպային իրավունքում համակողմանի վերլուծության են ենթարկվել, սակայն պետք է արձանագրել նաև, որ այս իրավունքի վերաբերյալ հայրենական գրականության մեջ ուսումնասիրությունները շարունակվում են, իսկ իրավակիրառ միասնական պրակտիկա դեռևս առկա չէ, ինչն իր հերթին խնդրահարույց է դարձնում արդար դատաքննության իրավունքի գործառական տարրի լիարժեք իրացման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ապահովումը, մեկնաբանումն ու ձիշտ կիրառությունը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից:

Ողջամիտ ժամկետում գործի քննության օրենսդրական հիմնահարցերին անդրադարձել է նաև իրավագետ Վ. Հովհաննիսյանը, ով նշել է, որ արդարադատության հիմնական նպատակը մարդու իրավունքների և ազատությունների որպես հիմնական սոցիալական արժեքի պաշտպանությունն է, որն օրենքի ձևական իրացմամբ կարող է չիրականանալ: Իրավաբանական գրականության մեջ տեղ գտած այն մոտեցումը, որ եթե դատավարական ժամկետները սահմանված են օրենքով, ապա դրանք արդեն իսկ ողջամիտ են, նախադեպային իրավունքում կարող է և հաշվի չառնվել: Վ. Հովհաննիսյանը նշել է, որ կարելի է առաջնորդվել օրենքով սահմանված ժամկետների ողջամտության կանխավարկածով, բայց ոչ ավելին: Այստեղից հետևում է, որ ողջամիտ պետք է լինեն նաև օրենքով սահմանված ժամկետները²: Հեղինակը նաև արտահայտել է այն դիրքորոշումը, որ եթե ՄԻԵԴ-ը կարևորում է իշխանությունների վարքագիծը, որը ներառում է հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կողմից կատարված գործողությունները և դրանց արդյունավետությունը, ինչպես նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի հետագա խախտումները բացառելուն ուղղված անհապաղ արդյունավետ միջոցառումները, ապա քաղաքացիական դատավարությունում առավելապես կարևորվում է դատավարության մասնակիցների վարքագծի և սեղմ ժամկետում քաղաքացիական գործի քննության ու ձիշտ լուծման համար պատասխանատու դատարանի գործողությունների նպատակահարմարությունն ու իրավաչափությունը:

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, գիտական խմբագիր Գ. Հարությունյան, Եր., 2005, էջ 212-214:

² Տե՛ս Վ. Հովհաննիսյան, Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, http://ysu.am/files/06V_Hovhannisyan-1516339029-.pdf, 04.06.2021 թվականի դրությամբ:

Թե՛ իրավակիրառ պրակտիկայում, թե՛ իրավաբանական գրականության մեջ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի էությունը և իրավաբանական բնույթը բացահայտելու հիմքում դնում են այնպիսի չափանիշներ, որոնք չպահպանելը հանգեցնում է այս իրավունքի խախտման: Սակայն կարևորում ենք նշել, որ հայաստանյան դատարանների կողմից դեռևս որպես միասնական չափանիշ և դատավարական կանոն չի սահմանվել երեխայի լավագույն շահը: Ողջամիտ ժամկետում գործի քննության և դատական ակտի կատարման իրավունքները ենթադրում են պետության կողմից (դատարանի կամ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով) քաղաքացիական գործի քննության և լուծման կամ դատական ակտի հարկադիր կատարման այնպիսի տևողություն և ժամանակահատված, որի ընթացքում դիմողի համար առավելագույնս կապահովվի պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքի սկզբնական նշանակությունը¹:

Մեր համոզմամբ՝ երեխայի լավագույն շահերը պետք է օրենսդրական մակարդակում ամրագրվեն որպես չափանիշ և սկզբունք այս կատեգորիայի ընտանեկան գործերի քննության առաջնահերթություն սահմանելու համար, ինչը հնարավորություն կտա դատարաններին ապահովել ոչ թե ողջամիտ, այլ սեղմ ժամկետում գործի քննություն, որով ինքնին կերաշխավորվի երեխայի լավագույն շահը:

Երեխայի լավագույն շահի՝ դատարանների կողմից ապահովման և «անտեսման» համատեքստում վերը ներկայացված ՄԻԵԴ նախադեպային իրավունքից և պրակտիկայից բացի, կարևոր ենք անդրադառնալ նաև հայաստանյան դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի խախտման դեպքերին, որը, ինչպես նշվեց, որպես կանոն դրսևորվում է երեխայի լավագույն շահերին վերաբերող ընտանեկան գործերը քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային, կորպորատիվ և այլ բնույթի գործերից որևէ կերպ չտարանջատելու և բոլոր կատեգորիայի գործերի համար օրենսդրի կողմից միատեսակ դատավարական կանոններ սահմանած լինելու պայմաններում երեխայի լավագույն շահերին վերաբերող գործերի քննության տևականության մեջ:

«ՎՍահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, **դատարանների**, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում **երեխայի լավագույն շահերին**»:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Մասնակից պետությունները պարտավորվում են երեխային ապահովել նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ՝ ուշադրության առնելով նրա ծնողների, խնամակալների կամ օրենքով նրա համար պատասխանատվություն կրող այլ անձանց իրավունքներն ու պարտականությունները, և այդ նպատակով ձեռնարկում են օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները»:

¹ Տե՛ս նույն տեղում:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուր երեխայի՝ իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ծնողը(ները) կամ երեխայի համար պատասխանատու այլ անձինք, իրենց կարողությունների և ֆինանսական հնարավորությունների շրջանակներում կրում են երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններն ապահովելու հիմնական պատասխանատվությունը»:

ՄԻԵԿ 7-րդ արձանագրության 5-րդ հոդվածը սահմանում է, որ «ամուսնանալիս, ամուսնության ընթացքում և ամուսնալուծության դեպքում ամուսինները հավասար իրավունքներ և մասնավոր իրավական բնույթի հավասար պատասխանատվություն ունեն փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: **Սույն հոդվածը պետություններին չի խոչընդոտում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների շահերը պաշտպանելու համար**»:

Ինչպես բազմիցս նշվել է, երեխայի խնամքի և դաստիարակության վերաբերյալ վեճը լուծելիս դատարանները պետք է առաջնորդվեն երեխայի լավագույն շահերով, որոնց առաջնահերթ պահպանմանն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանն իր 05.10.2010թ.-ի թիվ ՍԴՈ-919 որոշմամբ¹, որում արձանագրել է, որ ընտանեկան իրավահարաբերություններում «երեխայի շահ» հասկացությունը բարձրացվել է համընդհանուր ճանաչում ստացած իրավական սկզբունքի աստիճանի և հանդիսանում է ընտանեկան օրենսդրության հիմքում ընկած ինքնուրույն սկզբունք:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի ապահովվի հավասարակշռություն երեխայի և ծնողների շահերի միջև, և այդ հավասարակշռման գործընթացում առանձնակի կարևորություն պետք է վերապահել երեխայի շահերին, որոնք, կախված դրանց բնույթից և շրջանակներից, կարող են գերակայել ծնողների շահերի նկատմամբ:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ «Բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից(...)»:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Երեխան իր ծնողներից և ընտանիքի այլ անդամներից **ապրուստի միջոց** պահանջելու իրավունք ունի սույն օրենսգրքի 5-րդ բաժնով սահմանված կարգով ու չափերով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ «1. Ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին հանգամանք ձևավոր

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-919 որոշում՝ քաղաքացի հոգր Հակոբ-ջանյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 05.10.2010 թվական:

րելու նպատակով պարտավոր է, **չսահմանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով**, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր:

3. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման»:

Վերոհիշյալ դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ երեխայի լավագույն շահերին առնչվող ցանկացած հարց լուծելիս դատարանը պետք է առավել ձկուն լինի իր որոշումներում և գործի առավել ազատ: Նման դատական պրակտիկա դեռևս լիարժեք կայացած չէ Հայաստանի Հանրապետությունում, ինչը երբեմն հանգեցնում է ներպետական դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի անտեսման: Մտահոգության տեղիք են տալիս վերջին ժամանակներում արձանագրված դեպքերը, երբ դատարանը երեխայի իրավունքների պաշտպանության գլխավոր երաշխավորից վերածվում է երեխայի իրավունքները խախտող մարմնի, և ինչն առավել զարմանալի է, դատավորների նման վարքագիծը (գործողությունը կամ անգործությունը) համարժեք գնահատականի չի արժանանում՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Ավելին, ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդն իրավաչափ է համարել դատավորների կողմից երեխայի լավագույն շահերի խախտման դեպքերը՝ չարձանագրելով որևէ խախտում, որպիսի մոտեցումը չափազանց մտահոգիչ ենք համարում և գտնում ենք, որ նման «արատավոր» դատական պրակտիկայի ձևավորումը ոչ միայն ինքնին հանգեցնում է երեխայի իրավունքների խախտմանը, այլև հեղինակագրկում է դատական իշխանությունը:

Այսպես, օրինակ, 07.02.2020 թվականին Ա.Հ.-ն հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Զ.Զ.-ի՝ ամուսնալուծության, ալիմենտի բռնագանձման և անչափահասների բնակելի տարածության օգտագործման իրավունքը ձանաչելու պահանջների մասին: Հայցադիմումը 07.02.2020 թվականին մակագրվել է դատավորին և վերջինիս կողմից ստացվել է 10.02.2020 թվականին:

Դատարանը 18.02.2020 թվականին որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին: Նշված որոշման մասին տեղեկությունները «DataLex» դատական պաշտոնական տեղեկատվական համակարգում լրացվել են 22.06.2020 թվականին:

Հայցվոր կողմը չի ստացել վերը նշված որոշումը, ինչի կապակցությամբ դատարանի նախագահին 23.04.2020 թվականին ներկայացրել է դիմում՝ այնտեղ շարադրելով հայցադիմումը վարույթ ընդունելու մասին տեղեկությունների բացակայության վերաբերյալ փաստական տվյալները և խնդրելով անհապաղ ձեռնարկել միջոցներ գործի հետագա ընթացքն ապահովելու համար:

Ղատարանի նախագահի կողմից վերը նշված դիմումը 29.04.2020 թվականին հասցեագրվել է դատավորին՝ հետագա ընթացքը լուծելու համար:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին 18.02.2020 թվականի որոշումը Ա.Հ.-ին ուղարկվել է դատավորի օգնականի 26.05.2020 թվականի գրությամբ (գրությունը ղատարանի գրասենյակից ելքագրվել է հաջորդ օրը՝ 27.05.2020 թվականին), և այն հասցեատիրոջ կողմից ստացվել է 04.06.2020 թվականին:

Ղատարանի 31.08.2020 որոշմամբ 30.09.2020 թվականին գործով հրավիրվել է առաջին նախնական դատական նիստը (նիստի վերաբերյալ ծանուցումները կողմերին ուղարկվել են 11.09.2020 թվականին), որը կայացել և հետաձգվել է:

Ղատարանի 30.09.2020 թվականի որոշմամբ կողմերի միջև բաշխվել է ապացուցման պարտականությունը:

Քաղաքացիական գործով նախնական դատական նիստ է նշանակվել 01.12.2020 թվականին:

Ղատարանի 01.12.2020 թվականի որոշմամբ քաղաքացիական գործով նախնական դատական նիստն ավարտվել է, և գործը նշանակվել է դատաքննության: Ղատաքննությունը նշանակվել է 2021 թվականի մարտի 16-ին՝ ժամը 17:00-ին:

Նշված քաղաքացիական գործով դիմումատու ՎՎ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով է ներկայացրել հաղորդում՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու միջոցառությամբ, որի հիմքում դրվել են երեխայի լավագույն շահի անտեսումը և ուսնահարումը ղատարանի կողմից:

Նշված հանձնաժողովը հարուցել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ, և դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «...օրենսդիրը, հաշվի առնելով որոշ գերակա շահեր, առանձին տեսակի վարույթների համար սահմանել է գործի քննության այլ ժամկետներ կամ այլ ընթացակարգեր, մասնավորապես՝ երեխայի շահերի արդյունավետ և հնարավորինս արագ պաշտպանելու նպատակին է ծառայում երեխայի ապրուստը հոգալու համար ալիմենտ բռնագանձելու վերաբերյալ պահանջի դեպքում գործի քննության արագացված դատաքննության կարգի կիրառման հնարավորության վերաբերյալ օրենսդրական կարգավորումը, ինչպես նաև երեխայի լավագույն շահերի պաշտպանության նպատակով ընտանեկան վեճերով առհասարակ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե (ex officio) պարզելու կարգավորումը՝ հաշվի առնելով, որ նշված գործերի շրջանակներում շոշափվում են երեխայի օրինական շահերն ու իրավունքները, որոնց պաշտպանությունը պետք է մշտապես լինի ղատարանների ու շաղկապային կենտրոնում առաջնահերթության կարգով: (...) երեխայի լավագույն շահերի պաշտպանության ապահովմանը միտված օրենսդրությամբ սահմանվել են այնպիսի կարգավորումներ, որոնք ստեղծում են պայմաններ հնարավորինս արագ և արդյունավետ ապահովելու երեխաների լավագույն շահերի պաշտպանությունը՝ դրանք գերակա համարելով անգամ ծնողական իրավունքներից ու պարտականություններից, միևնույն ժամանակ՝ սահմանելով այնպիսի մեխանիզմներ, որոնց պրակտիկ կիրառման արդյունքում երեխաների շահերը ենթարկվեն ուղղակի պաշտպանության՝ անկախ ծնողների վարքագծից:

Վերը նշվածի մասին են վկայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վերոհիշյալ կարգավորումները, որոնք ոչ միայն հնարավորություն են ստեղծում, այլև պարտականություն են դնում դատարանի վրա չսահմանափակվել գործին մասնակցող անձանց միջնորդություններով, ինչպես նաև իր նախաձեռնությամբ հայցի ապահովման կարգով գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ կարող է հանգեցնել ներկայացված պահանջի փաստացի կատարման՝ երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով: Ընդ որում, եթե ծնողների գործողությունները կամ անգործությունը հակասում են երեխայի լավագույն շահերին, ապա դատարանը պարտավոր է ինքնուրույն միջամտել և իր նախաձեռնությամբ կատարել այնպիսի գործողություններ, որոնք պետք է ուղղված լինեն երեխայի լավագույն շահերի պաշտպանությանն ու կոնկրետ դեպքով կյանքի կոչեն երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը՝ այդ գործերով ցուցաբերելով առանձնահատուկ ուշադրություն, ջանասիրություն և հոգատարություն:

Հետևաբար, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական այն բոլոր գործողությունները, այդ թվում՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելն ու դրանից բխող հետագա դատավարական գործողությունները, ***երեխաների ապրուստի և բնակելի տարածության օգտագործման իրավունքի ճանաչման վերաբերյալ հարցերով*** գործի քննության ժամանակ պետք է կատարվեն հնարավորինս արագ և արդյունավետ, և ***նման գործերով դատավարությունը դատավորը պետք է կազմակերպի այնպես, որպեսզի երեխաների իրավունքների պաշտպանության հայցին*** հնարավորինս շուտ տրվի լուծում՝ սկսած հայցադիմումը վարույթ ընդունելու հարցից:

Ընդ որում, եթե գործի քննությունն ինչ-ինչ պատճառներով ձգձգվում է, ապա գործի տևական քննությամբ պայմանավորված՝ երեխաների լավագույն շահերը չվտանգվելու համար դատարանը պետք է օգտագործի օրենսդրությամբ իրեն վերապահված գործիքակազմի բոլոր հնարավորությունները՝ ապահովելով բնակելի տարածությունում երեխաների բնակվելու և մինչև գործի քննությունը որոշակի ժամկետով ալիմենտ ստանալու հնարավորությունները: (...) հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կողմին տևական ժամանակ չուղարկելով՝ ***վնաս է հասցվել երեխաների լավագույն շահերին***, որն այս դեպքում դրսևորվել է ալիմենտի և բնակելի տարածության օգտագործման իրավունքների ճանաչման հայցվող խնդրանքներին տևական ժամանակ լուծում չտրվելու և այդ ընթացքում երեխայի համար որևէ դատավարական գործողություն կատարելու հնարավորությունից կողմերին զրկելով: (...) Փաստորեն, հայցվորը, ով հանդիսանում է երեխաների մայրը, տևական ժամանակ՝ ավելի, քան երեք ու կես ամիս, որևէ տեղեկություն չի ունեցել իր հայցի ձակասագրի մասին՝ թե՛ իրավական առումով, թե՛ երեխաների ապրուստը հոգալու ու բնակելի տարածության հարցը լուծելու առումով գտնվելով բացարձակ անորոշության մեջ, և նույն կերպ որևէ տեղեկություն չի ունեցել պատասխանողը, ով հիշյալ որոշումը ստանալուց հետո էր միայն ձեռք բերել հայցադիմումի վերաբերյալ պատասխան ներկայացնելու իրավունք, ինչը կարող էր դրսևորվել երեխաների շահերից բխող տարբեր գործողություններ կատարելով, մասնավորապես՝ հայցն ընդունելով կամ դրա կատարմանն ուղղված միջոցներ ձեռնարկելով և այլն: (...)»:

Հանձնաժողովը հանգել է այն հետևության, որ երեխաների լավագույն շահերի պաշտպանության նկատմամբ դատավորի վարքագիծը, որը դրսևորվել է տևական ժամանակ երեխաներին վերաբերող հայցը վարույթ ընդունելու ենթակա լինելու հարցի լուծման անգործության տեսքով, նսեմացրել է դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և հեղինակագրվել է դատական իշխանությունը:

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը, սակայն, իր որոշմամբ նշել է, որ «...չնայած թույլ տրված դատավարական նորմի խախտման, կարևոր է արձանագրել, որ համաձայն ներկայացված նյութերի, դատավորի կողմից թույլ տրված խախտումը չի հանգեցրել այնպիսի հետևանքների, որոնք առաջացրել են իրավունքի անհամաչափ սահմանափակում կամ իրավունքից զրկում կամ կողմի համար առաջացրել են օրենքով չնախատեսված պարտականություն: Դատավորի արարքը չի հանգեցրել դատական իշխանության հեղինակագրվմանը, դրանով չեն խախտվել երեխայի իրավունքները և օրինական շահերը, և այն կարող է գնահատվել իբրև նվազ կարևորություն ունեցող խախտում՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ալիմենտ հատկացվում է դատարան դիմելու պահից, իսկ երեխան օրենքի ուժով կարող է բնակվել ծնողներից ցանկացածի հետ, իսկ կայացվելիք վճիռը միայն որոշակիություն կմտցնի կողմերի հարաբերությունների մեջ:...»¹:

Հատկանշանական է, որ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամներն արտահայտել են այն դիրքորոշումը, որ երեխայի լավագույն շահերի ոտնահարումը դատարանի կողմից չի հանգեցրել իրավունքի խախտման կամ սահմանափակման, մինչդեռ Բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամների կողմից հնչել է այլ՝ հատուկ կարծիք, որում ամրագրվել է, որ «...գործով որոշումը ժամանակին չուղարկելու հետևանքով առաջացած բացասական հետևանքների արդյունքում դատավորի դատավարական անգործությունն ուղղակիորեն ազդել է գործի հետագա ընթացքի վրա: Մասնավորապես, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ժամանակին չուղարկելու արդյունքում դատավարությունը մտել է փակուղի, ինչն էլ հանգեցրել է նրան, որ գործով առնվազն 7 ամիս դատական նիստ չի հրավիրվել, և քանի դեռ պատասխանողի պատասխան կամ հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունքներն ապահովված չէին, հնարավոր չէր գործի ըստ էության քննությանն ուղղված կատարել անհրաժեշտ դատավարական գործողություններ: ... Երեխայի լավագույն շահերի պաշտպանության ապահովմանը միտված օրենսդրությամբ սահմանվել են այնպիսի կարգավորումներ, որոնք ստեղծում են պայմաններ հնարավորինս արագ և արդյունավետ ապահովելու երեխաների լավագույն շահերի պաշտպանությունը՝ դրանք գերակա համարելով անգամ ծնողական իրավունքներից ու պարտականություններից, միևնույն ժամանակ՝ սահմանելով այնպիսի մեխանիզմներ, որոնց պրակտիկ կիրառման արդյունքում երեխաների շահերը ենթարկվեն ուղղակի պաշտպանության՝ անկախ ծնողների վարքագծից: ... Ընդ որում, եթե ծնողների գործողությունները կամ անգործությունը հակասում են երեխայի լավագույն շահերին, ապա դատարանը պարտավոր է ինք-

¹ Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-13-Ո-4-03 կարգապահական գործով 08.04.2021 թվականի որոշում, <https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/2SzOVzPYkdNNs90EoyBqI2AyJAnUJqQ3tMFLfrFz.pdf>:

նուրույն միջամտել և իր նախաձեռնությամբ կատարել այնպիսի գործողություններ, որոնք պետք է ուղղված լինեն երեխայի լավագույն շահերի պաշտպանությանն ու կոնկրետ դեպքով կյանքի կոչեն երեխայի լավագույն շահերի պաշտպանությունը՝ այդ գործերով ցուցաբերելով առանձնահատուկ ուշադրություն, ջանասիրություն և հոգատարություն:

... Դատավորի գործողություններն արդարացնելու համար փաստացի նշվում է, որ դատարան դիմելու պահից ալիմենտ հաշվարկելու հնարավորությունը «թույլ է տալիս» դատարաններին ձգձգել նմանատիպ գործերի քննությունը: Այնինչ, նման մեկնաբանության պայմաններում դատարանների կողմից ալիմենտային գործերով ձգձգումները կարող են հանգեցնել նրան, որ թեկուզև հայցվորը տևական ժամանակ հետո պատասխանողից «կլորիկ գումար» ստանալու իրավունք կունենա, սակայն, իրականում, երկարատև դատական գործընթացի արդյունքում կանգնած կլինի ապրուստի միջոցներ հայթայթելու խնդրի առջև: Կոպիտ ասած, որոշումից ստացվում է, որ «նորմալ է, եթե երեխան մեկ կամ երկու տարի սոված մնա, փոխարենը վերջում խոշոր գումար կստանա: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված դատավարական այն բոլոր գործողությունները, այդ թվում՝ հայցադիմում վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելն ու դրանից բխող հետագա դատավարական գործողությունները, երեխաների ապրուստի և բնակելի տարածության օգտագործման իրավունքի ճանաչման վերաբերյալ հարցերով գործի քննության ժամանակ պետք է կատարվեն հնարավորինս արագ և արդյունավետ կերպով, և նման գործերով դատավարությունը դատավորը պետք է կազմակերպի այնպես, որպեսզի երեխաների իրավունքների պաշտպանության հայցին հնարավորինս շուտ տրվի դատական լուծում՝ սկսած հայցադիմումը վարույթ ընդունելու հարցից»¹:

Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի ոտնահարում է տեղի ունեցել նաև մեկ այլ քաղաքացիական գործով, որով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում նախնական ապահովման միջոց կիրառելու եղանակով դատավորն առանց պատճառաբանության փոխել է երեխայի բնակության վայրը:

Նշված դեպքի առթիվ նույնպես հարուցվել է կարգապահական վարույթ՝ այն հիմքով, որ դատավորը կայացված դատական ակտում բացի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածից՝ իր վերլուծություններում հղում չի կատարել որևէ այլ իրավական ակտի, ՀՀ վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը, սակայն, այս անգամ նույնպես մերժել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին կարգապահական հարցերով հանձնաժողովի դիմումն այն պատճառաբանությամբ, որ «...հարուցված քաղաքացիական գործերը նույնական չեն, քանի որ փոփոխվել են խնամակալության և հոգաբարձության մարմինները և չի կարող խոսք գնալ միևնույն անձանց շրջանակի մասին՝ դատական ակտի նա-

¹ Տե՛ս Հատուկ կարծիք Բարձրագույն դատական խորհրդի 08 ապրիլի 2021թ. թիվ ԲԴԽ-13-Ո-Կ-03 որոշման պատճառաբանական և եզրակակիչ մասերի վերաբերյալ, <https://court.am/storage/uploads/files/bdx-disciplinary-proceedings/2SzOVzPYkdNNs90EoyBqI2AyJAnUJqQ3tMFLfrFz.pdf>:

խաղատելիության համատեքստում, բացի այդ, Բարձրագույն դատական խորհուրդը հանգել է այն հետևության, որ հայցի նախնական ապահովման միջոց կիրառելու մասին որոշումը չունի պատճառաբանման կարիք...»¹:

Հարկ է նաև արձանագրել, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նշված որոշումը չեն պաշտպանել խորհրդի երկու գիտնական անդամներ, ովքեր իրենց հատուկ կարծիքով արձանագրել են, որ «...անընդունելի են միջնորդությունը մերժած խորհրդի անդամների կողմից կատարված եզրահանգումները միջանկյալ դատական ակտերի **հիմնավորվածության և պատճառաբանվածության** վերաբերյալ...: ... Կարևոր ենք համարում փաստել նաև, որ մեր կարծիքով և՛ սույն որոշումը, և՛ խորհրդի կողմից կայացված այն որոշումները, որոնք չեն ընդունվել խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, չեն կարող հանդիսանալ կայուն նախադեպ: Այս հանգամանքը յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնեն ինչպես կարգապահական վարույթ հարուցող մարմինները, այնպես էլ դատավորները»²:

Նման պայմաններում կարող ենք արձանագրել, որ հայաստանյան դատարանների կողմից երբեմն երեխայի լավագույն շահը երկրորդվում է ծնողների շահերին, և դատավորները կամայականորեն փոխում են երեխայի մշտական բնակության վայրը՝ առանց համապատասխան պատճառաբանության, ինչը լի է բացասական հետևանքներով՝ ինչպես երեխայի լավագույն շահերի և բնակության վայրի իրավունքի պաշտպանվածության տեսանկյունից, այնպես էլ դատական իշխանության հեղինակության և որպես երեխայի լավագույն շահերի ապահովման երաշխավորի դերի նսեմացման վտանգով առավել ևս այն պայմաններում, երբ երեխայի լավագույն շահերի ուղնահարման դեպքերի կապակցությամբ կարգապահական հանձնաժողովի համապատասխան ազդակները մնում են անարձագանք՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմումը մերժելով:

Վերոհիշյալ դիրքորոշումների, ինչպես նաև դատավորների և գիտնականների կարծիքների, օտարերկրյա փորձի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ պետության կողմից պետք է ստեղծվեն բոլոր երաշխիքները երեխայի լավագույն շահի ապահովման համար ինչպես **որպես նյութական իրավունք, այնպես էլ որպես դատավարական իրավունք, սկզբունք և չափանիշ**: Վերը ներկայացված օրինակներում բացահայտվել, լուսաբանվել են դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի անտեսման դեպքերը: Սակայն այդպիսիք և ազգային դատարանների կողմից երեխայի լավագույն շահերի անտեսման և խախտման դեպքերն ավելի շատ են դատական պրակտիկայում. դրանց մեծամասնությունը մնում է չբացահայտված՝ գործին մասնակցող անձանց կողմից դատարանի գործողություններից հաճախ հիասթափված լինելու հանգամանքով պայմանավորված ընթացք չտալու և այդ գործերի վերաբերյալ իրավասու մարմիններին չդիմելու պատճառով: Կարծում ենք, որ երեխայի լավագույն շահերի ապահովման առաջին երաշխավորը պետք է լինեն հենց դատավորները, այնինչ ներկայացված օրինակներում, փաստորեն, ի հեճուկս դատավորների՝ գիտնականների կողմից առավել խորը և բազմակողմա-

¹ Տե՛ս ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի որոշում թիվ ԲԴԽ-60-Ռ-Կ-20, 13.09.2021 թվականին:

² Տե՛ս Հատուկ կարծիք ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի թիվ ԲԴԽ-60-Ռ-Կ-20 որոշման վերաբերյալ, 13.09.2021 թվական:

նի մոտեցում է ցուցաբերվել «Երեխայի լավագույն շահ» հասկացությանը՝ ապահովելով դրա թե՛ գաղափարական, թե՛ իրավական կենսագործումն արտահայտված հատուկ կարծիքով: Այդուհանդերձ, գտնում ենք, որ անգամ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու փաստն ինքնին չի կարող ի չիք դարձնել այն իրողությունը, որ Երեխայի լավագույն շահը փաստացի անտեսվել է դատարանի կողմից, և, ինչն առավել կարևոր է, Բարձրագույն դատական խորհրդի դիրքորոշումը հիշյալ հարցերի կապակցությամբ ունի նախադեպային դառնալու «վտանգ»:

Նման պայմաններում գտնում ենք, որ իրավական պետության առաջնահերթ հոգածության առարկան պետք է հանդիսանա Երեխային առնչվող ցանկացած հարցում նրա լավագույն շահի շեշտադրումը և դրա համատեքստում՝ օրենսդրական և պրակտիկ գործունեության այնպիսի երաշխիքների ստեղծումը (օրինակ՝ դատավորների հատուկ վերապատրաստումներ, երեխաներին առնչվող գործեր քննող մասնագիտական դատարանների ստեղծում, դատավորների աշխատազմերի համալրում համապատասխան մասնագիտական գիտելիքներ ունեցող մանկավարժ-հոգեբաններով, դատավորների ծանրաբեռնվածության թրթափում, օրենսդրական մակարդակում երեխաներին վերաբերող գործերի՝ այլ գործերի նկատմամբ առաջնահերթության սահմանում՝ դրանց քննության հատուկ կրճատ ժամկետների ամրագրմամբ և այլն), որպիսիք ոչ միայն կբացառեն դատարանների կողմից երեխաների լավագույն շահերի անտեսումը և (կամ) ոտնահարումը, այլև հնարավորություն կընձեռեն՝ ազգային դատարանները դառնան այն օրինակելի մարմինը և կառույցը, որը պետք է առավելագույնս ապահովի երեխայի լավագույն շահերի և իրավունքների կենսագործումն ու պաշտպանությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարթակներում:

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРИНЦИПА ЗАЩИТЫ НАИЛУЧШИХ ИНТЕРЕСОВ РЕБЕНКА СУДАМИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Այարի Յարգյան

*Судья суда первой инстанции города Еревана,
соискатель кафедры гражданского права ЕГУ*

Основная цель выяснения практики иностранных судов в интерпретации наилучших интересов ребенка заключается в обеспечении того, чтобы они учитывались. Наилучшие интересы детей игнорируются судами, и чтобы выявить причины этого, нужно обеспечить выявление таких нарушений государством, дать им правовую оценку.

В этой статье рассматривается прецедентное право Европейского суда по правам человека, которое анализирует понятие «наилучшие интересы ребенка» как материальное право, процессуальное право, процессуальный принцип и процессуальную норму.

Автором было предложено принять указанную процессуальную норму, соответственно, внести в законодательство изменения, которые позволят предотвратить игнорирование судами наилучших интересов ребенка.

THE PROBLEMS TO PROVIDE THE PRINCIPLE OF SAVING THE BEST INTEREST OF CHILD BY COURTS IN THE REPUBLIC OF ARMENIA

Hayarpi Zargaryan

Judge of the Court of First Instance of the City of Yerevan,

Applicant at the YSU Chair of Civil Law

The main purpose of foreign courts is to ensure that the best interests of the child are exercised, interpreted, and investigated in the best interests of the child. The best interests of children are ignored by the courts, so the main purpose of the study is to identify the reasons for it, to ensure the detection of such violations by the state, to give them a legal assessment.

This article covers the case law of the European Court of Human Rights, which analyzes the concept of "best interests of the child" as a substantive law, a procedural law, a procedural principle, and a procedural rule.

It was suggested to adopt the mentioned procedural rule, accordingly, to make legislative changes, which will make it possible to prevent the courts from disregarding the best interests of the child.

Բանալի բառեր- *երեխայի լավագույն շահ, ընտանեկան կյանք, Բարձրագույն դատական խորհուրդ, ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, երեխայի բնակության վայր, երեխայի ազատ տեղաշարժվելու իրավունք, ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք*

Ключевые слова: *Наилучшие интересы ребенка, семейная жизнь, Высший судебный совет, Комитет по этике и дисциплинарным вопросам Общего собрания судей Республики Армения, место жительства ребенка, право ребенка на свободное передвижение, право на уважение семейной жизни*

Key words. *The best interests of the child, family life, the Supreme Judicial Council, the Ethics and Disciplinary Committee of the General Assembly of Judges of the Republic of Armenia, the place of residence of the child, the right of the child to move freely, the right to respect for family life*